

Շնորհաւորական

- Երկուշաբթի, Յոկտեմբեր 16, 2006ի երեկոյեան եղբայր Օհան եւ Զարուհի Տէմիրճեան ամուլը բախտաւորուեցան աղջիկ զաւակով մը, դուստրըը կոչուեցաւ Քնար:

Մասնաճիւղիս թէ վարչութեանս սրտաբուխ բարեմաղթութիւնները:

- Ուրբաթ Յոկտեմբեր 13, 2006ին մասնաճիւղիս անդամ-անդամուհի Յովսէփ եւ Թալին Նալպանտեան ամուլը բախտաւորուեցան մանչ զաւակով մը որը կրեց իր մեծ հօր անունը՝ Կարօ, նոյնպէս մասնաճիւղիս երեց անդամ մը մինչեւ օրս:

Մասնաճիւղիս թէ վարչութեանս սրտաբուխ մաղթանքները ու խնդակցութիւնները:

- Փաստօրէն Սաղիմահայ գաղութի մէջ հարսանիքներու կայացման մասին խօսքը յատկապէս վերջին տասնամեակին հազուադէպ երեւոյթ է, բախտաւոր պարագային տարին երեք թէ չորս անուսնութիւն կարելի է արձանագրել ինչոր ակելի քան մտահոգիչ է գաղութին ապագային երաշխաւորման գծով:

Այսուհանդերձ, տարբերութիւն սովորականին Սեպտեմբեր 2, 2006ին, նոյն օրին, Շաբաթ, Սաղիմահայ իրականութիւնը հանդիսաւորեց զոյգ հարսանիքներ:

Առաջինը, Լատին մայրապետաց «Ռոզըրի» եկեղեցւոյ խորանի առաջ պսակադրուեցաւ Ֆատի Րաէտ ընդ Քարօլ Նաճարեանի եւ նոյն ժամուն նոյնպէս Լատինաց պատրիարքանիստ եկեղեցւոյ խորանի առաջ պսակադրուեցան Վիքէն Տըլտելեան ընդ Նիսրին Ամարի:

Վարչութիւնս կու գայ իր շնորհաւորական բարեմաղթութիւնները փոխանցելու բախտաւոր զոյգերուն թէ ընտանեկան պարագաներուն, որոնց համակրական նեցուկը կը վայելէ մասնաճիւղս:

- Մասնաճիւղիս անդամ յաճախ նաեւ վարչական եղբայր Էլի Գահուէճեան 30 Օգոստոս 2006ին բախտաւորուեցաւ մանչ զաւակով մը, անդրանիկը Էլի եւ Լեւոնդին Գահուէճեան տան: Մանչը կոչուեցաւ Գէորգ որպէս օրհնեալ շարունակականութիւն մեծ հօր Գէորգ Գահուէճեանի, որը մինչեւ օրս կը մնայ մասնաճիւղիս յարկին տակ որպէս երեց բայց եւ խիստ գործոն եւ տիրական դէմք:

- Կարծէք 2006-ը ակելին վարդագոյն ապագայ կը խօստանայ մեզ, գաղութիս թէ Յ.Ս.Ը.Մ.ին քան նախորդը:

Արդարեւ պատահեցաւ եւ ինչպէս՞ երկու նշանտուք, երկու մասնաճիւղիս անդամ եղբայրներու այն ալ Յայաստանի հողի վրայ, որը մեծ ուրախութեամբ թէ հպարտանքով լեցուց մեր կրծքերը:

Արդ, Յ.Ս.Ը.Մ.ի վարչութիւնը կու գայ իր սրտաբուխ շնորհաւորութիւնները փոխանցելու եղբայրներ Միհրան Գրիգորեանի եւ Միհրան Տէր Մաթոսեանի, որոնք գտնուելով Յայաստան վերջին 2 տարիներու ընթացքին հոն գտան իրենց խօստացեալ կողակիցները յանձինս Օր. Տիանա Անտրէյեան արայժմ Քուէթսահայ եւ Օր. Նարա Ներսեսեան բնիկ Յայաստանցի :

Եղբ. Միհրան Տէր Մաթոսեանի ընդ Նարա Ներսեսեանի նշանախօսութիւնը կայացաւ Յուլիս 13, 2006ին: Իսկ եղբ. Միհրան Գրիգորեանի ընդ Տիանա Անտրէյեանի նշանախօսութիւնը կայացաւ Օգոստոս 30, 2006ին:



եղբ. Միհրանը եւ Տիանան



եղբ. Միհրանը եւ Լարան

*Անգամ մը եւս վարչութեանս շնորհաւորութիւնները
Աստուած կամենայ եւ ձեր սկսած Սուրբ գործը ամբողջանայ*

*Mr. & Mrs. George Kassabian
Mr. & Mrs. Isolag Momjian*

*request the pleasure of
your company at the marriage
of their son and daughter*

Paul and Monique

*at St Yeghiche Church,
Cranley Gardens, London NW7
on Saturday 17th December 2005
at 5 o'clock
and afterwards at
The Ballroom, Claridge's,
Brook Street, London W1*

*Black Tie
Dinner and Dancing*

*Տէր եւ Տիկին Ճորճ Բասապեան
Տէր եւ Տիկին Տոյակ Մումճեան*

*Միրով կը հրաւիրեն Ձեզ
Ներկայ գտնուելու իրենց զաւակներուն*

Փոլի եւ Մոնիզի

*Սուրբ Պատկի Խորհուրդին
Շարաթ, 17 Դեկտեմբեր, 2005*

Գէտօրէ ետք ժամը 5:00-ին

Սուրբ Եղիշէ Եկեղեցոյ մէջ

Cranley Gardens, London NW7

Ընդունելութիւն արարողութենէն ետք՝

*The Ballroom, Claridge's,
Brook Street, London W1*

Վարչութեան բարեմաղթութիւնները եւ շնորհաւորութիւնները

Ուրախ եւ լաւատես տրամադրութեամբ կու գանք արձանագրելու այս տողերն, որը կը վերաբերին Հ.Ս.Ը.Մ.ի ընտանիքի ապագայ բարութք ընդլայնման առաջ Աստուած:

6 Օգոստոս 2005ին, Բասատինայի Հայոց Ֆերահեան եկեղեցւոյ մէջ, տեղի ունեցաւ Ս. Պսակի արարողութիւնը մասնաճիւղիս ժրագան արեւոյշ թէ պատասխանատու քոյր Նարինէ Եագուպեանի ընդ Տիրան Գուզուեանի:

Նորապսակ ամուլը, նախկին Սաղիմահայեր, իրենց բոյնը հիւսելու են հոն հեռուն՝ Լոս Անճելըս, մեր աչքէն հեռու, այսուհանդերձ, պիտի մնան մեր սրտի մօտիկ:

Վարչութեան բարեմաղթութիւնները եւ շնորհաւորութիւնները



14 Օգոստոս 2005ին, Ամնանի Հայոց Ս. Թաթնոս եկեղեցւոյ մէջ, տեղի ունեցաւ Ս. Պսակի արարողութիւնը մասնաճիւղիս սկառուտ ու գործոն անդամ Յովսէ Նալպանտեանի եւ Ամնանաբնակ Օր. Թալին Եսաեանի:

*Վարչութեան բարեմաղթութիւնները
եւ շնորհաւորութիւնները*





Մասնաճիւղիս գործոն անդամ, սկաւուտ, սկաւուտապետ եւ նախքին վարչական եղբ. Օհան Տէմիրճեան, 21 Օգոստոս 2005ի կէսօրէ ետք Ս. Զրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ կատարեց իր պսակադրութեան ուխտը Օր. Զարուի Թագաւորեանի:

Երեկոյեան ժամը 8ին տեղւոյս շքեղ սրահներէն մէկու մէջ անցկացուեցաւ նորապսակ ամուլի ուրախութիւն թէ շնորհաւորութիւնները:

Վարչութեան բարեմաղթութիւնները եւ շնորհաւորութիւնները

14 Սեպտեմբեր 2005ին, Երուսաղէմի Ս. Զրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ միութեանս համակիր եղբայր Լուֆֆիկ Գասապեան կատարեց իր պսակադրման ուխտը ապագայ կեանքի ընկեր՝ Ռոզալիին:

Վարչութեանս շնորհաւորութիւնները Լուֆֆիկի, Ռոզալիին եւ թէ համայն Գասապեան ընտանիքի, որոնք Զ.Ս.Ը.Մ.ի յարկին հարազատ զաւակներն են:

*Վարչութեան
բարեմաղթութիւնները եւ
շնորհաւորութիւնները*

